


Հատը 40 փարա



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ռ

ՀԱՅԵՍՏԱՆԻ ԿԱՅԺ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Ձեռքի , ոտքի ու ոտքի եւ ձեռքի
փանգամայն մեքենաներ
կը գտնուին

մեքենան լաւագոյն է . սոյն մեքենան ամենէն կատարեւորագործութեամբ ,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախողին միայն Սինկեր Հնկերութեան լաճառատանց մէջ :

ՆԱԿԱԹԱՆ
ՍԻՆԿԵՐԻ
ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

ԲԵՐՍ

- (1. Մեծ փողոց , Պօն Մարշէի դէմ , թիւ 343 եւ 343 կրկին .
- (2. Մեծ փողոց , Կալաթա Սէրայի Լիսէին դէմ .

ԿԱԼԱԹԱ

- (1. Սինկեր խան , Թիւնէլի ետեւը .
- (2. Գարաքէօյ , Թրամվէյի կայարանին դէմ .

ՊԱԼԱՏ

- (1. Մուլթան համալ .
- (2. Մուլթան Պէյաղլիտ , Թրամվէյի կայարանին դէմ , թիւ 13 .

ՍԵԻՆՑԱՐ

- (2. Զարչը Պոյու , թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ :


Սինկերի Հնկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերս , Մեծ փողոց , թիւ 343 եւ
343 կրկին , Տիւզդուլուի տունը :





ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻՒ 40 ՀԱՄԲԱՐՉՄԱՆ ԹԻՒ - ՀԻՆԳՇԱԲԹԻ 31 ՄԱՅԻՍ 1907



ԱՐԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ՍՐԱՀԸ

ԱՌԱՋԻՆ ՔԱՐԸ

(ՈՁ-ԱՌԱՆԴԱՎԷՊ ՀԱՄԱՐՁՄԱՆ ԱՌԹԻՒ)



ԲԿՈՒ հոգի ճամբայ մը բռներ՝ կ'երթային :

Առաջքէն գացողը թափըրփած բան մը ունէր իր վրայ . հագած լաթերը կտրծես իրը չէին, արմուկներէն ու ծունկերէն մի'սը կ'երեւար , ու ոտքի ամանները քիթերէն փռնուած՝ գետնի բիրտ սալաքարերուն վրայ համբոյրի՝ կը դառապարտէին անգուլպայ մասունքներու զյգ փռնը , ամէն անգամ որ մարդուկը ծանծրոյթի եւ չկամութեան քայլափոխը կ'ընէր : Ան ծանծրոյթին ու չկամութեան վրայօք շա՛ս բան կը խօսէր արդէն մազերուն ու պէխերուն շատոնց ազդպետիլ սկսած զոյնը . ծանծրոյթ՝ իր կեանքին միայնորդ ողորմուկ օրերէն , եւ չկամութիւն , ուժի բացարժա՛կ չգոյութիւն՝ աշխատելով օրուան ուտելիքը ճարելու համար :

Մարդուկը յանկարծ ծանկ մը զարկաւ մօրուքին մացառութիւն եւ հառաչեց , ու նորէ՛ն սկսաւ քայլել , անյոյս . աննպաստակ :

Դէպ ի ո՛ւր կ'երթար . ասկիա ո՛չ իր յոգնած միտքը գիտէր , ոչ ալ իր քուրջէ՛ սրունքները :

Ետեւ միացողը համառօտուած բան մը ունէր իր հասակին վրայ . իբեւ թէ միայն ու ոսկորի կծիկ մը ըլլար անոր իրանը՝ սրունքներուն կարկինին զագածը հրաշքով կեցած : Կը քայլէր այդ ամայի ճամբէն , կըռնակի պատեանը քարկոծուած կրիայի մը գնացքով , եւ անցնիւր քայլ որ կ'առնէր՝ կը թուէր վերջինը կամ վերջնները ըլլալ : Անմասնապէս քարերուն քակրատելով կ'առաջէին , զուխը կէս երկրպագութեան անորակելի դիրքի մը մէջ վայրահակ՝ ճամբուն խիճն ու կոպիճը համեւելու ձեւ մը ունէր եւ քամակը ա՛լ ա՛յնքան ծռած էր , որքան չի ծռէր գուցէ՝ խոշոր հակի մը թակ կըրուն թիկունքը արի՛ բեռնակիրին :

Ծերուկ մըն էր , պիտի խորհիր . բայց անգամ մը սըւոր դէմքը դիտեցէք . կեանքին զարունը նոր . ողջունող ճղամարդ մը չէ՞ ինքը , ոսկի՛ ոսկի՛ խոպապներով՝ որոնք քունքերը կը համբուրեն , քալուածքին տատանումներուն հետ , ծաւի՛ աշուկներով՝ ուրիշ ասկայն կայծ մը , ցո՛լը մը կ'անուխ փախեր է , եւ թեթեւ , կալուղ աղումագով մը՝ որ եկեր իր պերեւեշներն ու կզակները պատեր է , նորահաս դեղձի մը թաւիշը բանելով անոր երեսներուն վրայ : Սակայն այս դեղձը չունի՛ կարմիրներ իր կլորութեանը վրայ . հովի մը կ'սպասէ՝ ոտսէն անջատելու ու չի վայելուած՝ գետնը փսփելու համար , վասն զի վրայի խաբուսիկ մաշկէն ներս՝ որդեր իրենց աւերը սկս'եր են կտաւել :

Գարո՛ւն մը ահաւասիկ ո՛ր իր ամառը չի բոլորած՝ մեծ ոտսում մ'է՛ ըրեր եւ իր աշունին է հասեր :

Ու ճղամարդը կը հազար , կը տար , ճորճըրալէն կ'երթար շարունակ , դէպ ի ո՛ւր . ասկիա ո՛չ իր տրուած միտքը գիտէր , ոչ ալ անմացութեան կարօտ իր սրունքները :

* * *

Կէսի պէս բան մը , գորշ , անուրշ , աս երկու մարդուկներուն բռնած ճամբուն առաջքէն կը խաղար , կը շարժըրկէր : Երբոր վրան զուխը թափըրփած մարդը եւ իր թեւին ցուպերուն ապաստանողը հասան իրեն , մոռցա՛ն իրաւցանէ ինչ որ իրենց վիճակն էր՝ կարեկցութեան ու խնամքի արժանի . վասն զի ճղա՛յ մըն էր ասկիա առանց ծնողքի , չորս հովերուն ձգուած կրփկանանց սաղարթ մը՝ միջոցին մէջ տարուբեր : Կը խնդար , բայց այդ խնդուքը կտրծես թէ կային ե՛րզը ծայնագրեր , խաւացուցեր էր : Կը վազէր , ճամբուն շիտակը թողնէր՝ քովսանքի դաշտերուն մէջ կը սողոսկէր , մայր-ճագարը կորսնցունող ժագուկի մը պէս : Ո՛չ վրայ ունէր եւ ոչ գլուխ . մազերը՝ շարձանքով աստի երես չի տեսած՝ խառնագեր լեցուեր էին իր մինիսիկ զլխուն վերեւ , անտահման թնձուկով մը , ու եղունգները մագիլներու պէս կորնթարթ՝ աղսի ու կեղսի թագսոցներ զարծեւ էին ա՛լ : Երբ հովը կը փչէր ու անոր զոգնոցի պէս կարճ վրանոցին քղանցքը վեր վեր կ'առնէր , մերկ գիտերն ի վեր աղքը կը ճարար արդէն , ու միտքը ցուրտին ազատ խառնութեան թակ կապուտ կապուտ նիշեր կը ցուցարդէին : Հո՛ղը . ան իր երզը ունէր , մարգերուն մէջ թեւ թօթօղ թիթեւնիլը ու ցախերուն կասարը կտուցը քսող արտայտը իբր խտրի ընկերներն ունէր սաղին : Հակառակ այն անգիտակ զուարթութեան որ մանուկներուն հրեշտակի հոգին կը խայտացունէ , ցախերուն ու եղեսպակներուն մէջ դեգերող աս ճղան ասեւն ասեւն փորին կը տանէր ձեռքը եւ բռնուցք մը կը կոխէր վրան , որպէս զի դադրէր անկէ՛ ներս , աղիքներուն , շաղապատանքին մէջ շրջան ընող կուռ կուռ ծայրը : Անուձի՛ էր :

Գարնան մէջ իրաւ ա՛լ արշալոյս մը աս ճղան՝ որ արեւծագին ասեւն կը թխալ սնայ , կը մնջըրի ու վրայ՝ կուտայ մէկէն ի մէկ իր նկարչագեղ հորիզոնութիւնը՝ հեռուներէն քշուող եկող արշնամոյր ամպի մը պարա-

ծածկումով։ Արեւը աս ամպին տակէն, անոր թուխ ու մուգ թաւութեան ծերպերէն դուրս վիժէ թերեւս իր պապըն թելերը։ Բայց պատկերը իր ամբողջութեանը մէջ լրացուած մը, եղծուած մըն է։

* * *

Քայլ փոխելէն, հեւալէն, ասդին անդին աննպասակ դեգերելէն այլ եւս յոգնած՝ այս երեք անծանօթները կարծես թաք մէկ ըրած, եկան նստիլ ամայի ճամբուն եզերքը, ժեռուց ցցուածքի վրայ՝ ուր բնականէն ծնւած էին նստարանի պէս աստիճաններ։ Արեւը աղէկ մը ճաքցուցած ըլլալու էր ապառաժին կողերը բոլոր։ Քանի որ ճղան երբ իր անվարտի յետոյքը դրաւ ճափ շեղփի մը վրայ՝ օտէն վեր ցատկեց իսկոյն։

Ու եկաւ ասեմ մը որ իրենց խոնջէնքէն քիչիկ մը սնտափած՝ շուրջերնին նայլ ուզէին աս երեքը։ Երեք ակնարկ իրար խաչածեցին ու պաղած մնացին պահ մը։

— « Դո՛ւն, Թշուառութի՛ւն », բացազանչեց անթացուպերովը։

— « Դո՛ւն, Հիւանդութի՛ւն », ապադարձեց դէմինը։

— « Մի՛ մոռնար զիս, ե՛ս, նոյն ի՛նքս Որբութիւնը », ծայնեց քարակոյսին կարկառներուն կատարէն՝ աղ-
ւորիկ ճղան, մարդոցած կերպարանքով մը։

Ու սողսկելով, բշուելով, քարէ նստարանին կողերն ի վար քթիկ քթիկ սահելով իրար միացան երեքը եւ պագռուցան, իրարու արցունք խմելով, իրարու կեանք պատմելով . . . :

Պատկերը « ի խորոց սրտի » ցնցած էր այն անձը որ քիչ մը հեռուն՝ իր պոյսին մէջ դիպաւ աւազ եկեր հասեր ու արծառացեր էր ճեմնելով ճառապանքի եւ թշուառութեան այս երրորդութիւնը՝ իր կսկածազին սիրոյն ու գուրգուրանքին մէջ։

— « Իրենցն է քապս ու վաստակս այսուհետեւ, — մնախորհեց հեռուի մարդը, — հերի՛ք որչափ ժամ ու դպրոց շինեցի։ Ինձի անանկ կուգայ որ ասոնց ապաստանարան մը կանգնելով հարիւրներով Աստուծոյ Տու-
ներ պիտի կառուցած ըլլամ։ Օ՛ն ուրեմն, ի գործ, ի գործ . . . »։

Ու գետինը գնուցաւ, ու բանտները թափեցան, ու անտառի եւ հողի հարստութիւններ հոն փոխադրուեցան, ու առաջին քարը դրուցաւ ու ոսկիները ջուրի պէս վազեցին, եւ վերջապէս ապաստանարանը, իրաւ-
յունէ՛ « Ազգին Տունը » բարձրացուց զաշտերուն ճարձութեան մէջէն իր հոյակերտ տանիքը։

* * *

Երեք քառորդ դար բոլորուած է անկից ի վեր։ Հիւանդանոցը այսօր իր աղամանդէ յոբելեանը կը կա-
տարէ ետեփուլէի մի՛ եւ նոյն վայրը։ Ու Պատրիարքը իր հանդիսաւոր պատարագը կը կատարէ այսօր հոն, իր պերճ խօսքերը կը մսխէ այսօր « իրենցն է քապս ու վաստակս այսուհետեւ » ըսող ու գործադրող մեծ քարե-
րարին՝ Խազէզ Ամիրային հասցէին։ Ու հիւանդները, բախտէն անժառանգները, բունագիրի հէ՛զ ծագուկները, իրենց վերջալուսին հառնող անոք անօգնական խեղճ մարդուկները, բոլորը, բոլորը մէկ այսօր կը մոռնան իրենց ճրտմները, իրենց հողիի ու մարմինի ցաւերը։ Վասնզի տարուան մէջ մէկ օր իրենց ցնծութեան ժամն է։

« Ո՛վ որ Մարդուն թշուառութիւնը չէ տեսած. — ըսած է տասնեկններորդ դարու ամենամեծ քերթողը, — բան մը չէ տեսած, պէտք է տեսնալ կնո՛ջ թշուառութիւնը։ Ո՛վ որ Կնոջ թշուառութիւնը տեսած է, բան մը չէ տեսած. պէտք է տեսնալ ճղո՛ւն թշուառութիւնը »։

Իսկ ես պիտի գուրցեի։ « Ո՛վ որ ասոնց ամէնքը տեսած է, բան մը չէ տեսած. պէտք է տեսնալ Աղքատ-
Հիւանդին, մարդ մարդասանք չունեցող Զբաւո՛ր Երեւելին թշուառութիւնը »։

Աստուած երկար կեանք տալ մեր սիրեցեալ Օգոստ. Կայսեր, Ու իր առատագուծ ողորմութիւնը անպակաս կ'ընէ միշտ տոյն հաստատութեան համար։

Լո՛ւս իջնայ գերեզմանը անո՛ր որ այդ շէնքը ասոնց համար շինեց շիտեց, լուսերուն մէջ պառկին բոլոր անոնք որ իրմէ հսքը նորոգեցին, մեծցուցին, շէնցուցին, թեւեր ձեւե՛ր աւելցուցին անոր վրայ, ու թո՛ղ վարձահատոյց ըլլայ Աստուած ամէն անոնց որ գործերնին ձգած, որ շահերնին մոռցած՝ մինչեւ այսօր սատար ու նեցուկ կ'ուզեն մնալ մեր հիւանդներուն եւ անկարներուն այս մեծ ապաստարանին։

Իւսկիւսար

ԹԷՈՒԻՆ



ՄԱՀ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԻՒՆ

ՄՀՏ. ՆԱԶԱՐԷԹ ԷՖԵՆՏԻ ՍԵԼԻԵԱՆԻ

Ասուեղենի ծանօթ վանառական՝ Սեյիեան Յարուքիւն, Արամ եւ Արեակ Է-
Ֆենսիները նախորդ շաբթու դժբախտութիւնը ունեցան կորսնցնելու իրենց հայրը՝
Մհս. Նազարէթ Էֆ. Սեյիեան, որ ծանօթ էր արդէն առեւտրական հրապարակին
վրայ, Կեսարիոյ ազնուատնիս գերդաստանէն, իր ծննդավայրին մէջ համբաւուած
իբր բարեգործ եւ բարեբար, մայրաքաղաքի մէջ ալ վայելելով անուանը արժանի
վարկ ու յարգանք: Իր մահը մեծ կորուստ մ'է արդարեւ ամէն անոնց համար. որոնք
մօտէն հանչեցան ու օգտուած էին իր գործի մարդու օրինակելի բնացէն, ինչպէս նաեւ
իր առաստածեւնութիւններէն: Ողբացեալ Նազարէթ Էֆ. Սեյիեան, որ իր ծննդա-
վայրին՝ Ս. Լուաւորիչ Նկեղեցւոյն շինութեանը լրիւ սասարած է եւ գործադրած՝
Նորօրը կարելու մէկ կտակը, թէեւ հոս նմանօրինակ դրական յիշատակ մը չի թո-
ղուր, սակայն իր ետին կը ձգէ պատուաւոր եւ գործօն ազգայնի մը բարի համ-
բար եւ բարեպաշտ զաւակներ, որոնք լիովին կ'արդարացնեն այսօր իրենց պատ-
ւական հօր անմոռաց գործունեութիւնը:

* * *

Մայիս 25ին, ուրբաթ առաւօտ տեղի ունեցաւ հանգուցելոյն յուղարկաւորու-
թեան հանդէսը Գաթրիւղի Ս. Քազաւոր Նկեղեցւոյն մէջ յուղարկաւորներու
ստուար եւ ամենագոյն բազմութեան մը ներկայութեամբ՝ ուր կը նշանակէին սե-
ղանաւոր, վանառական եւ Եւրոպ. լանձնակաւար: Տանարը այդ սգասխուր
առթիւ շնորհակալ դարձաւ եւ իր ընկուզենիէ պէտք դադարը զետեղուած
էր շնորհ մահաբեմի մը վրայ՝ ծածկուած բազմաթիւ ծաղկեպսակներով: Սեյիեան
վանառասան պատգոնները կը հսկէր կարգադրութեանց, ներկաներուն վայել
մեծարանքներով: Մեծերական արարողութեանց կը նախագահէին Տ. Տ. Մանկունի
եւ Նեքեան Արեւիկայոս, իրենց շուրջն ունենալով Տ. Տ. Դեւոնդ, Ներսէս,
Գրիգորիս եւ Բարգէն վարդապետները եւ բազմաթիւ քահանաներ: Յուզիչ դամբա-
նական մը խօսեցաւ Դուրեան վրդ., ի վեր հանելով հանգուցելոյն կեանքը իբր
սիպար հայր եւ պատուաւոր սեղանաւոր եւ դուռնակով անոր բարեգործութիւն-
ները: Ծոպերն ու կերոնները կը կրէին ծանօթ անձնաւորութիւնք: Դադարն յետոյ
առաջնորդուեցաւ գիւղին ծայրը՝ ուր ներկաները իրենց ցաւակցութիւններն յայտ-
նեցին հանգուցելոյն բարեմոյն զաւակաց եւ փեսաներուն, որմէ վերջ դադարը
շնորհ մեծերական մը դրուելով առաջնորդուեցաւ գիւղին Ազգ. գերեզմանատունը
խուռն յուղարկաւոր կառնելու ընկերակցութեամբ, եւ ամփոփուեցաւ ընտ. յա-
տուկ դամբանին մէջ:

* * *

Խմբագրութիւնն այս փութը առթիւ իր վճակցութիւնը կը փութայ յայտնել
ողբացեալ Նազարէթ Էֆ. Սեյիեանի Տիկնոջ, որդւոց՝ Էլիշայարազայից, Երկնային
մխիթարութիւն հայցելով իրենց կրած այս դառն կորուստին համար:

ԻՆՉՈՒ ԿԱՍՈՒՍՆԱՆԱՆ

Առ Օրիորդ Մ. Ս.

[Շար. եւ վերջ]

Դուք ձեզի համար կերպով ամուսին մը նման այն սիրոյ հերոսներուն որ ֆրանսական վիպասանութիւններուն մէջ կը վիտան և որոնց պատմութիւնը այնքան անգամ հառաչներ իլած է ձեր չրթներէն և թերեւս արցունքներ ձեր ազուր աչերէն:

Սիրող, պաշտող, փափկանկատ ամուսին մը, ամուսին մը գգուող, ամէն զոհողութիւններուն պատրաստ, էրիկէ մը աւելի յաւիտենական սիրող մը, ա՞ս չէ տիպարը ձեր փնտռած կեանքի շնկելին:

Սոսկ երազ մըն է այդ, անիրագործելի, որովհետեւ մեր երիտասարդութիւնը ատանկ փիւնիկներ, ատանկ թիւղեղ charmantներ չարտադրեր: Տհաս քաղաքավարութեան մը, նախապաշարեալ և անորոշ նկարագրի մը ապացոյցներն են այս ամէնը: Ամուսնութեան նպատակը վերածել՝ տնտեսական հարցի մը վիճակին, խլել, վերցնել անոր ջմէն ինչ որ ունի գեղեցիկ ու վսեմ, չի փնտռել երկու տարբեր սեռի պատկանող անհատներու միութեան մէջ ազնուագոյնը կապերուն, միմիայն այս պարագան բաւական է հաստատելու թէ տակաւին շատ և շատ հեռու ենք քաղաքավարութենէ:

Այն ազգերը որ ՍԻՐՈՅ վեռութեան առջեւ չեն խոնարհիր, չեն ձանաչեր անոր ամենակարողութիւնը և կանգիտանան անոր կատարած աստուածացուցիչ դերը, կը զրկեն քրենք զիրենք զարգացեալ համայնք մը կոչուելու իրաւունքէն:

Այս դժբաղդ կացութեան մէջ կը գտնուինք մենք, պէտք է խոստովանիլ:

Արարչագործութիւնը՝ անհուն բարութեամբ մը, չէ զլացած սակայն ամէն բանաւոր էակի սրտին մէջ դնելու սիրոյ զգացումին սերմերէն: Պատճառ մը չիկայ ուրեմն կարծելու թէ մենք այդ կանոնին բացառութիւնը կը կազմենք և կամ նախախնամական լիատ կարգադրութեան մը չնորհիւ զրկուած ենք երկնային պարգեւներու այդ լաւագոյնէն:

Դրախտի խորհրդաւոր կատակերգութեան մէջ կը տեսնենք թէ Արարիչը սիրոյ անսպառ գանձեր դրաւ նախատիպար ամուսին սրտերուն մէջ, որոնք չռայօրէն սպառեցին այդ գանձերը խնձորենիի մը կոճղին ներքեւ:

Դիտաւորութիւնս՝ Աստուածաշունչի վրայ ունեցած հմտութիւնս ցուցունել չէ, կերպնում ձեզի, օրիորդ, այլ հասկցնել մեր ծընողքներուն թէ իրենք Բարձրեալէն աւելի puriste ըլլալուն իրաւունքը չունին:

Եթէ ամուսնութիւնը միայն և մի միայն փոխադարձ սիրոյ վրայ հիմնուած բան մը չըլլար, Աստուած չէ՞ր կրնար միթէ Եւայի ափին մէջ սպրդել իբրեւ դրամօթիտ 1000 ոսկինոց չէք մը Պանք Օթօմանի վրայ և տալ Ադամին իբրեւ դրամագլուխ 5000 հատ Սիւէզի Ջրանցքին աֆսոսներէն:

Պիտի առարկէք թերեւս, օրիորդ, թէ անկեց ի վեր ժամանակները շատ փոխուած են և թէ այժմ ամէն մէկ զոյգի համար ձրի դրախտ մը կարելի չէ գտնել:

Ժամանակները կրնան փոխուած ըլլալ, հակառակը չեմ պնդեր, բայց մարդը միշտ մի և նոյնը կը մնայ, սա տարբերութեամբ որ հիմակուան Ադամ-Եւաները օձի մը թելադրութեանը պէտք չունին... խնձոր մը փորցնելու համար:

Սէրը՝ ամուսնութեան սկզբնապատճառը պէտք է ըլլայ. տարբեր կերպով ներելի չէ ըմբռնել այդ խորհուրդին գոյութեան պատճառը:

Յաւալի է սակայն տեսնել թէ՛ մեր մէջ սիրոյ ամուսնութիւնները հաղուադէպ բացառութիւններ են միայն:

Ինչու:

Նախ անոր համար որ մենք սիրոյ վրայ շատ գէշ գաղափար մը ունինք, սէրը մեզ համար ամօթ մըն է, յանցանք մը, ոճիր մը:

Ես բարեկամներ ունեցած եմ, որոնք յօխորտանքով և պարծենկոտ գոհացումով մը՝

— Ես մէկ նստելուս կէս օրս բախի կը խմեմ, գիտե՞ս, ըսած են ինձի, բայց չեմ հանդիպած երիտասարդի մը որ առանց քաշուելու և առանց կարմրելու խոստովանի թէ աղջիկ մը կը սիրէ նոյն իսկ ամենէն շատ գովելի նպատակով:

Սէրը օրթեզանութիւն բառով մկրտուած

է մեր մէջ և ֆօրթեզան աղջիկ մը կամ մանչ մը բորոտի տպաւորութիւնը կը թողու իր ապրած շրջանակին մէջ:

Բնութեան դէմ հայոյել և անոր հրամանին հանդէպ ըմբոստանալ չէ՞ ասիկայ:

Եւ ըսել թէ, օրիորդ, սիրոյ պէս բարոյացուցիչ, անոր պէս նկարագիրները ազնուացընող ուրիշ զգացում չէ տուած Աստուած մարդուս:

Ճշմարիտ, մաքուր սէրը մինչեւ հերոսութեան կը մղէ զմարդ: Կեանքի պայքարէն յոգնած, ձախորդութիւններու տակ ճնշուող, ապրելէ ձանձրացած երիտասարդի մը ականջն ի վար թող աղջիկ մը ըսէ թէ անկեղծօրէն, սրտով, իր զգացումներուն ամբողջ թափովը կը սիրէ զինքը և պիտի տեսնէք թէ այդ վհատած երիտասարդը նոր ոյժեր պիտի առնէ, բոլոր հոգւովը պիտի աշխատի և վերջապէս պիտի յաջողի ընկերութեան մէջ դերք մը շինել իրեն և օրին մէկը, խանդավառ հպարտութեամբ մը պիտի գայ իր սիրտը դռնել սիրականին ոտքերուն առջեւ:

Ասանկ հրաշքներու շատ անգամ վկայ եղած եմ ես և ասոր համար է որ չեմ վարանիր երգելու սիրոյ փառաբանութիւնը:

Քաղաքավարութեան աշխարհին մէջ մենք գաճաճներ ենք տակաւին և բնականաբար չեմ կրնար պահանջել որ և է Նիկողոս աղայէ մը, Կիրակոս էֆէնտիէ մը, տիրացու Մարկոսէ մը և կամ Կարապետ աղբարէ մը որ սիրոյ վրայ ունենայ այն հաւատքը զոր ես ունիմ և դուք կրնաք ունենալ:

Գնա ըսէ անոնց թէ սիրոյ պէս աղնիւ, բարձր, մարդա Աստուծոյ հաւասարեցնող զգացում չկայ, օհ, անոնք վրադ պիտի խնդան և շատ չնորհակալ ըլլալու ես եթէ երեսդ ի վեր չեն պոռար թէ պարզապէս սրիկայ մըն ես:

Ասոնք կը կարծեն թէ երբ սէրը կը պաշտպանես և անոր վրայ կը ճառես, անպատճառ Հոռոմ աղջիկ մը ունիս որուն պատուհանին տակ, կէս գիշերէն վերջ ֆօրթեզանութեան պիտի երթաս:

Ապրէ՛լները:

Իսկ եթէ երբէք իմանան թէ վաճառական Սիմօն աղային և կամ սեղանաւոր Մարտիկ էֆէնտիին աղջիկը կը սիրես և ան ալ

քեզ կը սիրէ, այն ատեն պօգալի արարած մը կը դառնաս և շատեր բարեւնին կը կտրեն: Անմիաները:

Յօդուածս անոնց համար չեմ գրած, անոնք բան մը չեն հասկնար ասկէ, ուստի կը դառնամ ձեզի, օրիորդ և կը խնդրեմ որ ներողամիտ ըլլաք, եթէ ձեր այնքան կարճ պատասխանին՝ այսքան երկայն պատասխան մը տալու հարկին մէջ կը գտնուիմ:

Սիրոյ վրայ ըրած այս գովասանքս պէտք չէ կարծեցնէ ձեզի թէ՛ ամէն անգամ սկզբն հեշտութիւն և հրճուանք կը ծորէ: Անոր պատճառած դառնութիւնները և ոչ մէկ դառնութիւններու կը նմանին:

Սէրը, ս'վ աղնիւ Հայուհի, ցնորական յախշտակութիւնն է, խլիրդ մը դք կը կրծէ սիրտդ, կը պղտորէ միտքդ և կը խռովէ հագիդ, թոյն մըն է այն որ չի ներէր և չի գլթար:

Այսու հանդերձ յաւիտենական յաղթութիւն և մի եւնոյն ատեն անդիմադրելի պատրանքն է այդ:

Ինչո՞ւ համար ուրեմն, կը հարցնէք ինծի, կուզէք որ սիրենք և սիրուինք քանի որ սէրը այդքան դառնութիւն կը պատճառէ:

Անոր համար որ սէրը՝ հակառակ իր դժբաղակութեան, հակառակ իր պատճառած պատրանքին, յուսախաբութիւններուն, թափել տուած արցունքներուն, մարած խանդերուն, պղծած գեղեցկութիւններուն, մաքրած ժպիտներուն և աւրչտկած խեղճներուն, սէրը աննկարագրելի ցնծութիւններու և անսահման երջանկութեանց, աստուածը կը մնայ միշտ:

Գգուանքները, համբոյրները և զրկախառնութիւնները ինչ հրապոյր պիտի ունենային, ինչ հրճուանք պիտի կրնային պատճառել եթէ յուսախաբութիւններու արցունքները լացած և ցաւերու դառնութիւնը զգացած չըլլայինք:

Արտասուքով չաղաղուած սէրերը հիւանդ, ճղճիմ սէրերն են և չուտ կը ցնդին ասոնք ինչպէս կը մեռնին շուշանները երբ ջուրի երես չեն տեսներ:

Մեծ, կորովի հոգիներուն տրուած է սիրել գիտնալ, հետեւաբար չեմ զարմանար

կթէ ողորմելի արարածները առանց սիրոյ ալ
կրնան ամուսնանալ :

— Ինչո՞ւ կարգուինք :

— Շատ բաներու համար, բայց ոչ թէ
սիրոյ :

Ձեմ գիտեր թէ կրցայ միտքս բացարկել,
ինչ որ ալ ըլլայ սակայն, մտերմօրէն խրատ
մը ունիմ ձեզի տալիք, որմէ կրնաք օգտուիլ
ապահովապէս :

Երբ ձեզ համար ամուսնութեան ժամը
հնչէ — աս չըլլալիք բան չէ — այս գրած-
ներս կարդացած ըլլալնիդ անգամ մօռցէք և
թող տուէք որ պսակեն զձեզ ինչպէս կը
պսակեն սուրբական Սօֆի մը, Վերժին մը,
Էլպիս մը, Ագապի մը և Պիստոս մը :

Յօդուածս սկսած պահուս հանգեցեմ եւ
բազմեցարու՛մ ըսի ձեզի: Երբ իմանամ օրին
մէկը, թէ հակառակ ձեր կամքին, զձեզ ա-
մուսնացուցեր են որ և է պարոնի մը, օ՛հ,
այն ատեն, օրիորդ, ինծի ուրիշ բան չի մնար
ըսել, բայց կթէ Անեցեմ եւ բազմացարու՛մ :

Յ. Ա. Լ. ՓԻՍԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

Ազգային Պատրիարքարանի տնոց դադար-
եալ հաւաքիչ Միսաք աղա Գեորգեանի հա-
շիւներու կարգադրութեան համար պէտք լի-
նելով գիտնալ, թէ արդեօք նորա ձեռնով
գանձուած տուրքեր կա՞ն, որ Պատրիարքարա-
նի տնայնութեան չեն անցած, եւ յաւանդու
9011 մինչեւ 1100 բուռհամար կրող ընկա-
լագիրներու մասին, որոց տեղեկութիւնք ներ-
կայացուած չլինելով, կ'իսնդրուի, որ եթէ
լիւեալ թիւերով ընկալագիրներ տնայնութեան
եւ կամ թէ ուրիշ կերպով շփոթութիւններ
նշմարողներ կան, հանին օր յառաջ պար-
տաւարան տնայնութեան տեղեկութիւնները Պատրիարքա-
րան հասցնել, որպէս զի հնար լինի վերջնա-
կան կարգադրութիւնն ընել, ծագած եւ
ծագելիք շփոթութեանց առաջն առնուլ :

ԿՆԻՔ ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԲՈՑՖԻԼՆԵՐ

Ձ Ա Ձ Ա

Sérieuse. Աստուծոյ ուխտին հետ պսակ-
ուած մայրապետի մը պէս ու խօսուին :

Անգլուհի մը հասակը, Իտալուհի մը
աչքերը, Ֆրանսուհի մը բարեհեղութիւ՛ը և
Հայուհի մը . . . ոչինչ կը կազմեն իր ֆի-
զիքական ամբողջութիւնը :

Համետ ու միջակ ընտանիքի մը մէկ
հատիկը՝ Չաղա — որուն աւագանի անունը
տալը հոս, թերեւս վիրաւորէ իր այնքան
նուրբ ու փափուկ արժանապատուութիւնը —
տղայ հասակէն կոչուած է գործունեայ եղ-
բօր մը դերը կատարել՝ հսկել իր բոլոր վը-
րայ ու ապահովել անոր նիւթականը՝ նեւ-
ուած գործի աշխարհին մէջ, և ուսման ու
կրթութեան յենդով վարժուհի եղած է մէկ
քանի տեղական վարժարաններու — ինչ-
պէս գրած էր ինքը, իր մէկ Օրագիրին մէջ —,
և հետզհետէ Հայ-Լայն ընտանիքներու ալ
ծանօթանալով, մասնաւոր դասեր տուած է
անոնց և կուտայ մինչեւ այսօր :

Իր առաջին երեսուցը «Հանրագիտակ»ի
մէջ, նախ կարծել տուաւ թէ օրուան նորոյ-
թին պէս պիտաւոր օրիորդ (1) մըն է ինքը,
սակայն ընթերցողներու լուրջ դասակարգը
չփորձեց նոյն իսկ այդ տեսակ գաղափարի
մը հետեւիլ, խորհելով թէ «Հանրագիտակ»
պէտք չունի բանաստեղծի ու ծիծաղելի կեղ-
ծիքներու :

Թերթիս համակրելի Տնօրէնը Վ. Փա-
փազեան, ստուգելու՝ նամանաւանդ համո-
զելու համար կասկածոտ ընթերցողներէ չա-
տերը, ազաչեց յարգելի օրիորդին որպէս զի
արտօնէ իր լուսանկարին հրատարակումը
«Հանրագիտակ»ի մէջ, սակայն ինք՝ խորհե-
լով ցուցամոլութենէ՝ մերժեց այդ խնդրան-
քը, որով պատիւը չունեցանք՝ բացայայտ
կերպով՝ ծանօթացնելու իր իսկութիւնը մեր
Պատ. ընթերցողներուն :

Իր կիրթ և ազնիւ բնութեան կը միացնէ
զգլխիկ խօսակցութիւն մը՝ որ անուշ է իր
զրիչին պէս և կը թովէ գրեզ :

Ինքը չէ այն անամիտ տիպարներէն՝ ու-

քոնք իրենց չգիտցած մէկ բանը գիտցող ձեւացնելով կը յոխորտան միշտ:

Շատ անգամ կը հանդիպիմ իրեն Բերաի շիտակը, ուր հակառակ իր երիտասարդ տարիքին, տարեցի մը լըջութեամբ կը շարունակէ ճամբան խոնարհ ու կոկիկ:

Իր մշակած գրական սեւը, մինչեւ այսօր փորձողներու հետ բաղդատութեան գրուելով, պիտի տեսնուի թէ՛ Զապա, պեան է ուրոյն դպրոցի մը: Օրագիրի և լուրջ քրիսթիոնի անմըցելի ներկայացուցիչ մը՝ որուն մէջ կատարեալ ձեռնհասութիւն ցոյց կուտայ, հեռութացիկ բացատրութիւններէ, հեռու միմոսական լկտի քաջքուքներէ և ճոռոմարանութիւններէ:

Իր գրուածքները կարգացողներուն, արդէն յայտնի է իր ազդու և ձաղկող ոճը, իմաստի և բացատրութիւններու այն կուռ պաշարը զոր իր մէջ մի Օրագիրին մէջ կը ցոլացնէ:

Կանխաւ ներողութիւն կը խնդրեմ իր գրութիւններուն մասին այն քանի մը պզտիկ դիտողութիւններու համար, զորս պիտի թուեմ հոս, իր շարք մը առաւելութիւններուն հետ:

Զապա կ'ընտրէ, ընդհանրապէս, այնպիսի նիւթեր՝ որոնց մէջ ղէմքերը իրենց իրական փուլերուն մէջ ներկայացնելու համար, քիչ մը շատ յախուռն կը վարուի, մանաւանդ իր վարժութեան շրջանին տեղի ունեցած այն տգեղ անէթոտները՝ որոնք թէեւ իրական, սակայն զանոնք հրապարակելու իր յանդգնութիւնը քիչ մը խոտոր կը համեմատի իր կնովական փափկաճաշակութեան:

Մենք իրմէ կը սպասենք աւելի կանացի հարցերու շուրջ թեթեւ ոճով գրուածքներ, նամակի ձեւով մտերմական խրատներ, նկարագրականներ, որոնց մէջ շատ աւելի կարողութիւն ցոյց կուտայ, ինչպէս տեսանք իր վերջին Բաց-նամակին մէջ և զոր շատերու գնահատումին արժանացաւ:

Վերջացնելէ առաջ, պիտի խնդրէի ջերմապէս «Հանրագիտակ»ի մեղուածքան Տնօրէնէն, որպէս զի ապահովէր Զապա աշխատակցութիւնը իր ամէն թիւին համար, ուր արդէն գրական բոլոր ճիւղերը կը մշակուին ամէնայն յաջողութեամբ:

Բերա

ՍԵՊՈՒՀ Մ. ԱԿՈՒՆԻ

ԱՐԵՒԵԼՔԻ

ՄԷԿ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ

Ա.գն. Տօքթ. Թօփճեան էֆէնտիի նորակազմ խմբագրութեան տակ տակաւ կատարելութեան հասնող մեր հին ու տիպար օրաթերթը Արեւելք, ուրախութեամբ կը լսենք թէ՛ գնահատուելով նոյն իսկ Լուվենի գրական ժիւռիէն, արժանացած է Ա. մրցանակին, որուն արժանի է արդարեւ:

Օրաթերթերու և Հանդէսներու միջազգային այս յանձնաժողովը մանրաքննին ուսումնասիրելէ վերջ Արեւելքի պարունակութիւնը, տպագրութիւնը, նիւթերու ճոխութիւնը, խմբագրական առաւելութիւնները, ինչպէս նաեւ շարադասութեան մագրութիւնը և թուղթին ազնուութիւնը, անոր արժանի մրցանակը յատկացուցած է, ի վարձ լրագրական կոկիկ հրատարակութեան:

Արեւելք որ քիչ ատենուան մէջ անուն մը չինեց իր շուրջ, իրեն վիճակած Եւրոպական այս գնահատումէն քաջալերուած, կը յուսանք թէ՛ իր բազմատեսակ զոհողութեանց ալ աւելի ոյժ տալով, պիտի ջանայ ինչպէս միշտ, առաջին տեղը գրաւել հայ մամուլին մէջ:

Իր անկողմնակալ պաշտօնակից, ի սրտէ կը շնորհաւորենք զինք՝ իրեն անունին և աշխատութեան արժանի այս մրցանակին առթիւ, և կը մաղթենք որ իր ընթերցողներու արդէն լեցուն թիւը կրկնապատկուի թէ հոս և թէ ի գաւառս:

ՇՆՈՐՀԱԻՈՐԱԿԱՆ

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ՛ ողբացեալ Տիգրան էֆէնտի ծիվէլէկեանի զոյգ թերթերը ձեռիսէի-Շարգիյէ և Սուրհանդակ, որոնք իրենց Արտօնատիրոջ մահուանէն ետք ատեն մը դադրած էին, Բարձրագոյն հրամանաւ վերսկսած են կրկին հրատարակուիլ:

Ձերմապէս կը շնորհաւորենք նորակազմ վարչութիւնը և յարատեւութիւն կը մաղթենք իրենց:

Վ Ի Ճ Ա Կ



(Վիճակին հարսնուկը)

Վիճակը՝ որոնք նորոյթի համար հոգի կուտան և նոյն իսկ . . . պաշիկ իրենց գլխաւորներուն որպէս զի ետ չի մնան մօտէն (ոչ Գատըգիւղինը) սակայն իրենց մէջ կան սովորոյթներ, որոնք հակառակ նոյի տապանէն մնացած ըլլալուն դեռ կ'կրկնուին իբր թէ chic parisienneի վերջին թիւէն քաղուած ըլլար:

Այս կարգէն է Վ.Ի.Ճ.Ա.Կը:

Ամէն մեծ պահք՝ Զատիկի Յարութիւնը կը բերէ, ամէն Զատիկի Յարութիւն՝ իր քառսունք Համբարձումը, և ամէն Համբարձում՝ վիճակի պտուկը:

Կիներ մանաւանդ յաւիտենական ճամբորդութեան պառլը չալկածներուն վրայօք խօսելով, բան գործ ըրած են Վիճակը, այնպէս որ, այդ կարգի կիներէն ան որ պոխթը չունենայ վիճակի պտուկ մը պատրաստելու, տաքը սիրածի չափ մեղք մը գործած կը համարի ինքզինքը:

Թէ ինչ է Վիճակին պտուկը, 140,000 երրորդ անգամը ըլլալով կրկնէ՞ք հոս, քանի որ ամէն տարի կը կրկնուի այդ սովորոյթը:

Աղուոր գառնաբիւլով (•) եփելու յարմար

հողէ պտուկ մը, որուն մէջ կը դնեն եղանակին ծաղիկներէն գոյն զգոյն թերթեր, կիսով չափ ջուրով լեցուն, յետոյ այդ ծաղիկներուն մէջ կը նետեն տեսակ տեսակ մանր առարկաներ: Գիշեր մը ամբողջ բաց օդին դրուելէ վերջ, ցերեկին դուռ դրացի ժողովուելով է՛ն աղուոր աղջիկը կը դատեն, զուսը քողք մը կ'անցնեն, կաթնաթոյր թեւերը կը սոթթեն, և այսպէս կարգաւ մէկ մէկ առկօ բանաստեղծութեան քառեակներ մը արտասանելով այդ աղջկան կը հրամայեն մէջի առարկաներէն հատ մը դուռս քօշմը, որուն ըլլալը ստուգուելէ վերջ կրկնուած ոտանաւորին հետ կը բաղդատեն և անա քուոր ներկաները խայնար ջուրի մէջ իյնալու պէս եռեսուն երկու ակունին դուրս ձգելով ճաթիկ ճաթիկ կ'ուզան, կը զբօստան և այսպէս կը տօնեն, Համբարձման Վիճակը, առանց նկատի առնելու իրենց նիւթական վիճակը:

Գաղափար մը տալու համար այս կանացի լոնճային խօսուղւտութիւն վրայօք հոն պիտի փորձենք նկարագրել զիրենք՝ բոլոր ըսուած ոտանաւորներով:

* * *

Առաւօտունն այն ժամերուն, երբ ինքի-ինքն բերէնք կիներու մօտ մարմիններու չորջանը կրնեն պտըտկելով, լեռներու, ձորերու հովիտներու մէջէն, ճիշտ այդ կէս քուն կէս արդուն վիճակներուն մէջ, անշուշտ անոնք, որոնք Վիճակին վիճակակից պիտի ըլլային, աչքերնին բանալով ջղային հիւանդներու պէս կը ցատկեն իրենց անկողիններէն և իսկոյն վրանին բէշ մը քաշելով գործի կոկսին:

Կանանց համար չիկայ օր մը այնքան ուրախաւիթ՝ որչափ Համբարձման Հինգշաբթին, յորում զգացած անուշութիւննին կ'երդնում որ առագաստի օրն անգամ չեն ըմբռնանաւ, երդում ձեզի:

Պատկերը՝ զոր պիտի գծեմ հոս վարը, կանցնի միջակ թաղի մը խիտ առ խիտ տու-

ներով փողոցներէն մէկուն անկիւնը պարտէզներու մէջ, ուր ժողովուած են հինգ վեց ընտանիքներ, ու կիներ այն դասակարգէն, որոնք պատմա-բէշ կը հագնին, էրիկ կը ծեծեն, բաղնիքին մէջ իրար կը լուան (ջրով թէ խոսքով), աղէկ տօլմա կը փաթթեն, ծուռ նայողին չի լսուած լուսանքներ կը տեղան, դգալ բուսուսի կը գործածեն, տակէն արջընդ տասը փարանոց թանթէլալը շապիկ կը հագնին, և ... պէտքի համար քէօն կապ կը քակեն: Կարծեմ այսչափով հասկցաք, նիւթիս հերոսուհիները, որոնք մեծ դեր պիտի խաղան հետագայ նկարագրականին մէջ: Այս յօդուածը որ 40 փարայով կը կարդաք, ես 40 ղրշ ծախք ըրած եմ մօտէն դիտելու և նկարագրելու համար, ուստի պիտի խնդրեմ որ գոնէ ծախքս հանելու համար Զատիկի ժամկոչի պէս դուռէ դուռ չի պտտեցնէք թերթս, և միայն մէկ ղրշ տուողը կարդայ:

Ժամը չորսն է: Պարտէզին մէջ բոլոր հըրաւիրեալները եկած բազմած են ալ, բոլորն ալ բէշերնին վեր, միսօներով գետնի կանանչին վրայ ծալապատիկ, մէջտեղը աւանդական պոսկը վրան գոց, ներկաներուն մէջ կը նշմարուին ծերեր, տարեցներ, կէս տարեցներ, դեռ ամուսնանալու միտք ունեցողներ, որբեւայրիներ, էրիկը ձգածներ, էրիկէն զատ մէկ երկու հոգի սիրած ձգածներ, թօխումցու մատմազէշներ, ֆիտան օրիորդներ, մանտրուք աղջիկներ, անիծի պէս պղտիկներ, վերջապէս կանացի աշխարհին ամէն տեսակէ ներկայացուցիչներ, որոնք եթէ բօքան դրուին, վարպետ սաֆեֆար մը հասած քիթը բերանը տեղը չի կրնար ցուլել:

Մէջերէն է՛ն հողին մօտ՝ գերեզմանապատիւ պառաւուկ մը խօսք առնելով,

— Հայտէ նայինք, մօրը առջինեկը քողքեցէք ...

— Նոյեմդարս կայ տուտու, ամա առջի էրիկէս է, չըլար ...

— Չէ՛ ... եավրում, հօրմէ մօրմէ մէկ առջինէկ պիտի ըլլայ ...

— Քա Շահանդուռը ինծի կուգայ քի առջինէկտէ, հէ Մանեա՞ ...

— Հա ամա, սընըրը է տէ շատ սըխընթըր չի գար ...

— Էյ հայտէ նայինք, վախիթը կ'անսիկոր կըսէ ուրիշ մը նստած տեղէն խախտելով, ըսէք կէնճեր, առջինէկնիդ ո՞րն է ...

— Քա նա՛ Պայծառիկը կայ ...

— Թամամ, Պայծառիկը քողքեցէք տէ բերէք, հայտէ աղջիկս պատկզ պողնեմ, գնայ կլտիթ թիւլ մը ձգէ տէ եկուր ...

— Ա՛խ ... Կիւլիւկս պէտքը չէ՛ր քի ողջ ըլլար տէ քողքէինք ... կըսէ սիրտը երած մայր մը աչքերը սրբելով, ան ինտոր ալ աղուոր կը վայելեցուներ ...

— Լեման դուռն ալ քուրուկ, հիմա լալկան կնկան գործ չէ ասիկայ, մինք մեզի ճիւղալիւշ պիտի ընենք ...

— Հա՞, ամա, սիրտս վեր ելաւ տէ ...

— Էյ պէյիթները ո՛վ պիտի զուրցէ նա՞յինք ... կըսէ կին մը ...

— Կեցէք, աճելէ մընէք, տուտուն թող հայրմեր մը ըսէ ...

Տուտուն կըսկսի մըթմըթալ,

— Հայ մեր որ էրկինքն ես, սուր եղիծի անուն քո, եղիծի գամ քո որպէս էրկինս և էրկրի, սաց մեր անապազօր ...

Ի վերջոյ, հարս եղած և քողքուած օրիորդը մէջտեղը կը նստեցնեն և ալ արարողութիւնը կսկսի:

Չի մոռնում ըսելու որ մէջտեղը դրուած պտուկին մէջ ներկաները բոլորն ալ մէկմէկ առարկայ դրած էին առջի իրիկուընէ, զորս մի առ մի պիտի քաշեր կէս-հարս օրիորդը:

— Հայտէ նայինք եալապուլս Սուրբիկ, պաշլայէ ...

— Չէ՛ ... առաջ ինէ մենծը կայ, պէտքութիւն է քի ան պաշլայէ ...

— Է՛հ, Թուրֆանտա տուտու, պաշլայէ նայինք ...

— Քա եավրում, միտքս հիշ չէ մնացեւ ամա, է՛ն առաջ երկու մարա ըսեմ տէ դուք խուսուրը ույտուրմիշ ըրէք ...

Վիճակ վիճակ կիւլ օլա

Պու վիճակտ կիլէնիճ ցիլէթի գապուլ օլա

— Էյ ապրիս, բարի աղօթքովդ մարիկս, հայտեցէք նայինք, Կիւլեանէ տուտու, չէքէր մը ծամէ, ամա աղջիկս, մինչեւ քի պէյիթը չի լըմըննայ ծառքդ մէջէն չպիտի հանէս, հա՛, ասէթը ան է ...

Արբա պուղսայ բանէ սիր
Պիլվեմ քի սեւսա նէ սիր
Էօյի պիր եարէ սիւսիւմ
Պիւնէրսէ պիր բանէ սիր

— Բաշէ աղջիկս, ամա սա թեւերուդ
թանթէլաները վեր առ քէ չի թրջի:

— Մասնոց մը ... որի՞նն է ...

— Ա ... Լուսեայինը ... Է՛յ խաչոր, սը-
մաւումա պէյիթ էլաւ վրան. աշկ օլսուն,
պինդէրտէ պիր թանէ տիր, էյ իրաւ անանկ,
վա՞ր մը Լուսեամ կիպի ...

— Խերը տեանաս, վարդուկ հանըմ, բարէ
պտուղ զաւակ ըլլայ ...

— Խերը տեանաս ... խայրըլը փեսի տէր
ըլլաս ...

— Շնորհակալ եմ ... տառօսը ձերիննե-
րուն կլուխը ...

— Շնորհակալ ենք ...

— Է՛յ, պաշխա պէյիթ մը, հայտէ նա-
յինք ...

Թօփաւորն ալքը սու սր
Կեօյիւր աւֆ գաբուսը սր
Սեւսիւմ սեմի մէյիլիւմ
Աննըմըն եագրսը սր

— Ակուաֆ մը ...

— Ա ... Շաղիկինն է ... վա՛յ քէօս-
տէպէք վա՛յ, տահա տուր պազալըմ ...
անցած տարի տեղը կընէր կոր բիշքօն, հիմա
սէվտաի՞ ինկաւ ... էյ աս թօհաֆ պան ...

— Խերը տեանաս Կիւլիւկ հանըմ ...
բարի պտուղ զաւակ ըլլայ ...

— Շնորհակալ եմ ... տառօսը քուկին-
ներուդ ...

— Հայտէ՛, պէյիթ ո՞վ պիտի ըսէ ...

Ըրմագսան ագար սուլար
Շազ շազ եօթիլի գուլար
Բեմպէ նագիֆ սիր եարիւմ
Եիւզիւնէ պագմա սօլար

— Չախու մը ...

— Բա որի՞նն է նայիմ ...

— Նագիկ հանըմինն է ... քա՛ ... ա-
նունը վրան, ինտօ՞ր ալ ուլմիշ եղաւ ...

— Էյ չէ՛, նայէ մախսուս ատ պէյիթը-
լսիր քի վրան ելլայ տէյէ ...

— Է՛յ ես ի՛նչ խապահաթ ունիւմ, պեր-
նիս ատ եկաւ ...

— Աս ըլլալու բան չէ, պինտէ պիր ը-
ռասթ չիգար ամա ...

— Էյ նէ իսէ ճանըմ, աս ալ աստնի թող-
թանի, ըսէք նայինք ...

Թավլունըն չիֆք զարք վար
Կիւզէլ եօսմա եարի վար
Նէյնէյիւմ պեմ օ եարի
Բեթիւնէ կեզէնի վար

— Բա՛ ...

— Հանէ աղջիկս հանէ նայինք ամա մէյ-
մը խառնէ ...

— Մախսուս մը ...

— Բա վո՛ւյ ... Ուսկուհիցայինն է ... ,
հօշնտոււմ, ո՞վ է նայիմ բէշդ ի վեր պտըտ-
կողը ... հէ՞ ...

— Բա աման կոցեցէք, հիմաճուկ շախա
է բան մըն է ելաւ ...

— Ինծի նայեցէք, աս չեղաւ, ո՞վ քի-
վրաս շիւբէն ունի նէ ճակատոս պաց է, թող
երեսիս ըսէ ... ո՞վ է եղէր նայիմ բէշիս
պտըտկողը, տալեանի պէս էրիկս դրած ի-
քէն, եռմուռճախս տանի որի՞ն երեսը պի-
տի նայիմ ...

— Բա աման դուն ալ Ուսկուհիցայ, աս
վիճակ է, հիմա իրաւի՞ կը տանիս կոր ...
օյին պօզդունութիւն մի հանէր, մինք քեզի-
չե՞նք ճաշնար ... չօզ չէյ ...

— Ամա չէ, բիւթիւնին սըրային ուռու-
սումլու պաներ ըսին, սըրան ինծի եկաւ նէ
ֆասըլ պէյիթի ... հա՞ ...

— Բա ճանըմ տուռուլմիշ եղիր, շախայ-
է շախայ, ասոր վիճակ կըսեն ...

— Ամա իրաւ անանկ, պէլքի բէշինտէ
կեզէնի վար տէյի փիսիկին համար կըսէ կոր,
քանի պախճան կելլաս նէ պիր տիւզ բէշդ-
ի վեր է եռմուռճախը ...

— Ինծի նայէ, ես շաշլսըն չեմ, ատ պէ-
յիթին մէջը, փիսիկ միսիկ չիգայ, տիւզճէ-
սիրողի համար է ըսուածը ...

— Է՛յ ... հայտէ կարճ կապեցէք, ա-
սանկ բաներ կըլլայ պէյիթներուն մէջը ...
ըսէք նայիմ, դուն ըսէ Սուրբիկ ...

Ուզուն սրն սրբոց կիպի
Էֆեի սին գօրուգ կիպի
Մահալիկեր կեզեքսին
Եօնուլմուե քավուգ կիպի

— Թռնախի մախաս մը ...

— Որինն է ...

— Վերոնիկինը ... քա վո՛ւյ ... պարէ
էրկան պօյու ըլլայ ...

— Էյ հիմա ելլամ տէ ծեծկուրմ ... վը-
րաս ասանկ պէյիթ մը ելաւ տէյի, Աստուած
պահէ, էրիկս ինծի հաւնէր առէր է, կիւլե-
րու պէս կը հոտովըտայ կը նայի կոր, պաշ-
խասին ալ ֆասիֆէս պիլէ չէ ...

— Վո՛ւյ պերանըդ պագնեմ քուրուկ ...
տեսա՞ր խելացիութիւնը ...

— Պերնէս պալ կը վազէ, մահալլէն ալ
եկած չունիմ, դուք աղէկը գիտէք ... ա-
նանկ չէ՞ դրացի ...

— Վո՛ւյ, վրադ բարի, ես քէֆիլ եմ,
հայտէ հայտէ, քաշեցէք նայինք, պէյիթ մը
ըսէք ...

Զիւրիւկ քահնա մրգլա գամ
Դրանդ առջին երթամ գամ

— Քա ոտքդ պագնեմ, քաշէ նայինք,
աս խըյախ փախաւ ...

— Կոճակ կոճկելիք մը ...

— Նէկտարիկ հանըմինն է ... քա վո՛ւյ ...

— Էյ իրաւ քի չիւրիւկ էի ամա, Աստուած
մէկ օրը հազար ընէ հէքիմիս քի թէմէլ չի-
վիսիի պէս ըրաւ ինծի, պէրէքեաթ էրկանս,
միսին օխան տասնը չորսի ելաւ, կէնէ օրը
երկու խալէմ բըրծօլան չի պակսեցուց ...

— Էյ վրադ բարի ... փառք Տէրօջը,
ի՞նչ ունիս ... ամա ատ պէյիթը ուրկէ ալ
միտքդ ինկաւ քա Տիւրիկ ...

— Քա աման ի՞նչ գիտնամ, բան մըն ալ
ես ըսեմ ըսի, իշտէ պերնիս ատ երկու սը-
րան եկաւ ...

— Թօհաֆ պան, էյ ըսէք նայինք, Թո-
ռոտեայ, դուն ալ սախըդ մը ծամէ, ամա
քիչ մը, չալքարայ ես դուն, տիխաթ ըրէ,
նայէ խըռ կը հանեն կոր ...

— Ես ըսեմ նէ, անանկ մէզիւռայով պէ-

յիթ չեմ կրնար ըսեր, ներսէս ինչ գայ նէ
թող պիտի տամ ...

— Էյ հայտէ նայինք, կիմանաք կոր ես,
ետքէն պան չի զուրցէք հա՛ ... կիւլէճը
պոնկուս պէս կը թափեմ ...

Քիւրիւր քիւրիւր օճաղը
Կէյիւրիւր արբըգ չալը
Էյիւրիւր պէֆի օյսու
Շու սօգազ եումուռնաղը

— Մի քաշեր քա, տահա պան կա՛յ նէ
ըսէ ...

— Քա ի՞նչ կիտնամ քի որի պիտի ելլայ ...

— Քաշէ քա լուսեայ ... որի ելլայ նէ
ելլայ ...

— Մասնի հալխա մը ...

— Քա որինն է ...

— Ֆուլիկինը ... էյ թամամ ... աշկս
քէօռնայ զաւակս, տահա քանի տարու է,
տուր պագալըմ ... տիպը պագնողը թող
առնէ, անոր հարը դրած է, դրած ...

— Էյ իշտէ շախայ է ըսինք ես, չօգ
չէ՛յ ...

— Ամա չէ, դուն գիտես մեզի, կըլլայ
քի հոս չը գիտցող կըլլայ, հերու չէ՛ր քի խը-
լավուզները դուս քէօրիւ ըրեր էին տէ,
տահա պըղտըտիկս է տէյի ճուղապ տուի ...

— Քա հա եալըում, ես անոր խոնտախ-
լըիւր գիտեմ, դուն հոգդ մըներ, տահա քա-
նի տարու է իրաւցունէ ... ըլլայ ըլլայ
քանը ութը ...

— Հա, ես կայ ես չիգայ, բաթլիճանին
պօլ տարին եղաւ տէ, վարը թէյգէս թավան
տէվիւրիւ ըրաւ, օճախը բոնկեցաւ տէ, տո-
ղես կաթերս փախաւ նէ, դուն աղէկը գիտ-
նալու ես ...

— Քա քուրուկ, ատ տարիքը չօճուխ-
ները հիմա տպրատուն կերթան կոր ...

— Պէյիթը զուրցէ քա Պիստոս, դուն ալ
աղուոր կըսես ...

Եօգուեսան Էնիմ Էնիե
Եաղըղըմ օլու Էնիե
Պեն կիւլէի պագար Էնի
Պըյըղըմ քըքը Էնիե

— Հանէ աղջիկս հանէ ...

— Մալի պոնճուխ մը ... որինն է ...

— Թագուհիցայինը ... երկու աչկդ խաղա աղջիկ ...

— Էյէր քի էրկանս վրայ կը խնդաք կոր նէ, տեսնողները, ճաշցողները թող ըսեն, վեր վեր սանտրելու ըլլայ նէ, տակը չորս կընիկ արգելէն սըղընմիշ կըլլայ ...

— Էյ հա, քէօքը խուվէթլի ըլլայ, Աստուռած չար աչկէ պահէ, քանի կասնի կը դառնայ նէ մայիլ կըլլամ, ամա, խըսխանմիշ չըլլաս ...

— Չէ ... տիւնեայ մէլէյի ըլլայ նէ, սանկ մը չի նայիր ... արեւը սիրեմ, աչկը պացաւ իս տեսաւ, աշխարհքին կընիկը ըլլայ նէ մախպուրը չէ ...

— Մէկ բարձի վրայ ծերանաք ... ապրիք զօրանաք ...

— Ամա ինտոր ալ պըլըսի վրայ պէյիթ մը ելաւ քա, չօգ շէյ ...

— Էյ հայտէ, ըսէք նայինք, տակէսնէմ կառնեմ կոր չայիրին վրայ ... ո՞վ պիտի ըսէ ... Նառթիկ, դուն ալ ըսէ ...

Ինճեհիկ իյնէ միսին
Կեօզէրէ սիւրմէ միսին
Ա կիւլիւմ ցէ քաթլըսըն
Շեֆերլի խուռմա մըսըն

— Հանէ աղջիկս ...

— Տիւտիւկ մը ... որի՞նն է ...

— Սողոմիկինը ... էյ աս վայելց ... աղուոր աղջիկս, իրաւ շէքէրլի է ամա գիտցողին ... նայինք որի՞ խըսմէթ պիտի ըլլայ ...

— Իչալլահ, աղուորութեանը կէօրէ, ըռահաթ տեղ մը կիյնայ ...

— Հա ամա, աչկը քէօռնալիք դրախտման տեսա՞ր մի դուն, մէզառ խաչխընի ըլլայ տէ, հետը պիպիշ ունենայ նէ, տիւնեայ մէլէյի տէյի խապուլ կընեն կառնեն կոր ...

— Էյ հախ ունիս քուրուկ, հիմաճուկ ուանները փարա կիւվէսի են զաթը, ինծի կուգայ քի, օր պիտի ըլլայ, ժամուն մէջը հարսին տեղը, տոպրակ մը օսկի դնեն, տէր-տէրն ալ ատ տոպրակին հետ փեսան կլոխ կլոխ պիտի տայ ...

— Էյ սուտ չկա սանքի, ասանկ կիւլերու պէս աղջիկները տունը կը մնան կոր տէ, անդին տէվէ թիքէնի եռամուռախները,

հինտ խուճալի պէս ծառքէ ծառք կը պտըտին կոր ...

— Աստուծոյ գտնան հէմէն ի՞նչ ըսեմ ... պէյիթ ըսէ քա կիւլիւկ, զաթը գիտնալս մէջը բան չի մնաց ...

— Էրիկս խողը դնելէս պէրի, ասանկ վիճակներու հիշ պէյիթ ըսած չունիմ ...

Ու մինչ ճալաճուլա կիւները իրենց վիճակին անգիտակ, վիճակ կը հանէին չուրջանակի բոլորուած, բասոս շղթայի մը պէս քով քովի, տան տէրը Յուսեփիկ աղա շատոնց եկած դրանը չախչախը կոտրելու աստիճան զարկած և ճարահատ պարտէզին կողմէն ներս մտնելով, հեռուն տեսած էր երկու երեք չիք միւսիւններ, որոնք օրիորդներու հետ կտուց կտուցի ծառի մը տակ, խիտ խոտերու մէջ բայ կը խոնարհէին:

Կինը ի տես իր ամուսնոյն,

— Քա վո՛ւյ ... Յուսեփ աղան ալ եկեր է, էյ թամամ, հիմա անոր ալ պէյիթ մը ըսել պիտի տանք ... եկուր Յուսեփ աղա քիւլթիւնս ալ հոս ենք ...

— Ինծի նայէ կնիկ, քիչ մը ինծի եկուր կ'ըսէ մարդուկը բարկութենէն կաս կապուտ կտրած, հոս եկուր...: Ու կամաց մը կ'առնէ կը տանի հոն՝ ուր ծածկուած էին սիրաբորբոք զոյգերը:

— Հիմա ասոնք տեսա՞ր ես, հա՛, ատ տեղը ծան ծանի տալով կիւվէճի վիճակը հանելու, թող մուխայէթ ըլլայիր տէ, հոս տեղի կիւվէճին վիճակին օտթան հանէիր:

— Քա՛ ... ասոնք երբ ներս եկեր են քի չի տեսայ ...

— Հիմա ինծի մտիկ ըրէ պէյիթ մըն ալ ես ըսեմ տէ անկաճիդ օղ ըլլայ, ըսելով սատունը կը կրկնէ:

Կիւնեէ երիտիր եաղմուրլա գարր
Թալուգ սու իչէր պագար եօգար
Նե՞ կիւնահ իւլէսիմ անապ պիլէմեմ
Քի Մեվլամ վէրսի սարսափ պիր գարը:

ԼԻԼԱ





ԽՕՍՔԵՐՈՒ ՏԱՐԱՓ

ԼԵՑՈՒՆ ԿԱՄ ՊԱՐԱՊ

Կ'ըսեն թէ Զափրաստին, Հօլասին և Արուսեակին մահերովը թատրոնի բեմին լուսատու ջահերը մարեցան, ուրեմն ասկէ կը հետեւի թէ՛ ալ ասկէ վերջ կարելի պիտի չըլլայ գիշերները ներկայացում տալ, այլ միայն ցերեկները լոյս աչքով, քանի որ ջահերը մարած են :

X

Ինչպէս արդէն յայտնի է ծանօթից ու անծանօթից իմոց կենդանեաց, թէ ես մեղաւորս պարապ խօսքէ բնաւ չեմ ակորժիր, սակայն կը հարցնեմ թէ՛ արդեօք պարապ խօսք մը ըրած կըլլամ, երբ ըսեմ թէ կանխաւ կը խօստանամ որ եթէ այս անգամ երկաթուղւոյ վիճակահանութեան առաջին պարգեւը Տէրը ինձ պարգեւէ, անմիջապէս Ղալաթիոյ Դպրաց դասուն եռայարկ (եռաձայն չը հասկցուի) կալուած մը պիտի նուիրեմ, ուրուն ամսական վարձքը կալուածապետ քըսակեալին հաւաքչի քսակը բուլուժի պէս ուռեցնէ :

X

Դոյնմարտ նոր աշխարհը գտաւ, Ինտրաներաշխարհը, Էսթրն կրամօֆօնը, Բասթօր միքրօպը, Կիւմիւշեան քախսապիքիին քօզը, Ե. Ա. իր կինը, Զիլինկիրեան եռաձայնը, 40 զրուշնոց հաֆթալըխճին իր նշանածը, բայց ես բազմամեղս՝ Բեֆիլ մը անգամ չի գտայ Զատիկին ձեռք մը ապառիկ հագուստ առնելու համար հանրածանօթ Հերմայի վաճառատունէն, ուրեմն վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ :

X

Երբ կ'ըսուի թէ՛ թոքախտին դարմանը օրիորդ մը գտած է իր երազին մէջ, անմիջապէս կը հաւատաք, ուրեմն ինչո՞ւ չէք հաւատար ինձ, երբ կ'ըսեմ ձեզ թէ՛ ես մահահանացուս այս օրուան օրս մեծահարուստ

պանքեւ մ'եմ, քանի որ ես ալ անցեալ գիշեր երազիս մէջ այն երանելի մետաղը Բիւրեկով կը կշռէի ու պարիկը կը լեցնէի, հետեւաբար մի երկնջիք, բերեք վստահեցէք ինձ ձեր թանկագին աւանդները ու աղամանդները, որոնք միայն իմ քով իրենց գործածուելու եղանակը պիտի կրնան ի գործ դնել, ըսէ՛ք, ըսէ՛ք, կազաչեմ, ինչո՞ւ միայն օրիորդին խօսքին կը հաւատաք ու բըժըշկական ժողովի մը հրաւեր կը կարգաք, ու իմ խօսքիս առանց կարեւորութիւն տալու անմիջապէս կը պատրաստուիք քսիքեքս հանելու, զիս պարիսպներէն դուրս հաստատուած պոյալը նոր շէնքը օդափոխու թեան ղրկելու համար : Ո՛հ, Աստուած իմ, անտանելի է այս . . . :

Ա. ա. այժմ

մնամ Սկիւտար

ԵՐՄՈՒ



ՄԻԱԿ ՓՈՐԱԳՐԻՉԸ



Բուն կրնամ յանձնարարել՝ շիւթի (souaխ) վրայ Է՛ն նուրբ եւ Է՛ն կննոս փեթեներ, ինչպէս նաեւ քառք վիզիքի յասուկ նուվօք գիւրեւու փորագրութիւնը բոլորովին նորօրինակ եւ գեղարուեստական :

Գաւառներէ եղած յանձնարարութիւնք փութով նշուրեամբ կը կատարուին : Անգամ մը փորձելը բաւական է գաղափար մը կազմելու համար Տ. Շիրինեանի նաւակին, արուեստին եւ կարողութեան վրայ :

Հասցէ. — Պապը-Ալի Գասսէսի.



ԱՄԲԱԿՈՒՄԻՆ ԽՕՍՔԵՐԸ ՏԱՐՈՐԻՆԱԿ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ՄԸ



Պատմելու համար բերանս բանալէ առաջ, պահ մը կը մտածեմ, կը մտածեմ որ ինչպէս կրնամ պատմել ա՛յս քան կնճռոտ խնդիր մը, որ ճիշտ անել փողոցի մը երեւոյթը ունի:

Սակայն, եթէ չկրնամ պատմել, պիտի ըսէք որ «Ամբակումը մեռաւ մեզի համար, քանի որ ա՛յ բան մը պատմելու կարող չէ»: Համմէ: Սակայն ես կուզեմ որ աստանկ ըսէք և ունեցած երկու փարայի պատիւս ... փարայի մը իջեցնէք և եթէ աստանկ ըսէք, պատիւ չպիտի բերէք իմ ստղանդիս՝ որ այսօր ամենքնիդ ալ գնահատած էք... ծափերով:

Այո՛, պատմելէ առաջ կուզեմ պատրաստուիլ և պատրաստուելէ առաջ ... պատուաստուիլ:

Որովհետեւ պատմելով այս կնճռոտ պատմութիւնը՝ պիտի քրտնիմ, և քրտինքս, մարմինէս վար ջրվէժի՛ պէս հոսելով, գտնուած տեղս պիտի ողողէ ու քանի որ ես լողալ չեմ գիտեր ի՞նչ պիտի ընեմ, ահա ասոր համար պէտք է պատրաստուիլ, պէտք է հանուիլ, պէտք է երկու դուռ բերել տալ և թեւերուս անցնել ... սակայն ես ինչեր կըսեմ սիրելիներս, միթէ ծովուն պանծո՞ն եկած եմ ...:

Որպէս զի ձեզի չձանձրացնեմ, պիտի սկսիմ պատմելիքս, օ՛ն ուրեմն ականջնիդ ինծի երկնցուցէք, ներեցէք, սխալ ըսի, քանի որ ականջ իդ լատիք չէ որ երկարի...

Օր մը, սիրելիներս, սոսկալի ակռայի ցաւ մը, օձիքէս բռնելո՛ւն պէս, ատամնաբոյժի մը քով նետեց զիս, հազիւ ակռաս քաշուած, չորս կողմս նայեցայ, ո՛հ, հուրի մը, գեղանի կնոջ մը հանդիպեցան աչքերս, մեղաւոր աչքերս:

Քիչ մը ետքը ծանօթացանք իրարու հետ և հասկցայ որ այրի ալ էր, ուստի անոր հաւանեցայ սիրելիս, և քօնաձը նոն է որ ինքն ալ ինծի հաւաներ է ... և քանի մը օր ետքը ... ամուսնացանք:

Հազիւ թէ ամուսնացած, աղջիկ մը դէմս ցցուեցաւ, խոշոր աղջիկ մը, ո՛վ էր գիտէք, կնոջս՝ առջի ամուսինէն վաստակած պտուղը:

Հայրս որ այրի մնացած էր, ինչպէս եղեր հաւաներ է անոր հասակին և առանց ինձմէ հրաման առնելու ... քանի որ խորթ աղջիկս էր ... հետը ամուսնացաւ ... առանց օժիտի ... քանի որ դրամ տալու վիճակին մէջ չէի ... աղջիկս ձեռքէ հանելու համար:

Հի՛ ... հի՛ ... հի՛ ... ահա հայրս՝ որ իմ փեսաս կըլլայ և իմ խո՛րթ աղջիկս՝ ... մայրս ... քանի որ հօրս կինն էր ...:

Քիչ ժամանակ ետքը, կինս ինծի մանչուկ մը պարգեւեց, աղւոր, թօմպուլիկ մանչուկ մը: Հա՛ ... հա՛ ... հա՛ ... ահա հայրս՝ քեռայրը կըլլայ զաւկին և աս թօհաֆ է շատ թօհաֆ ...:

Հօրս կինը իր կարգին մանչ զաւակ մը աշխարհ բերելով, այդ մանչուկը ... իմ եղբայրս եղաւ ... քանի որ հօրս զաւակն էր, իրաւ թէ փոխանակ խնդալու պիտի լամ, բայց այս անգամ վաղ կանցնիմ և ուրիշ առթիւ կը վերապահեմ:

Սյս կերպով հա՛ ... հա՛ ... հա՛ ... կինս՝ իմ մեծ մայրս էր ... և ես թոռն էի կնոջս, մի և նոյն ժամանակ ալ իր էրիկը հա՛ ... հա՛ ... հա՛ ... թօհաֆ չէ, համմէ՛ ...:

Ուրեմն, պիտի խնդրեմ որ հոս աղէկ մը տիկ ընէք, ուրեմն մարդու մը մեծ մօրը էրիկը, բնականաբար իր մեծ հայրն է, անանկ չէ՞, և ես ալ, ո՛վ ծաղրելի և սոսկալի բան, այո՛, ես իմ հարազատ մեծ հայրիկս կըլլամ ու ներսէս անանկ կուգայ որ մաղերս փեթտեմ ... սակայն չեմ փեթտեր ... քանի որ ես չեմ որ իմին մեծ հայրիկս կըլլամ ... հապա՛ ... մէկն է սիրելի բարեկամներէս ... որ քիչ մը առաջ ինծի պատմեց ... մաղթելով որ ես ալ աստանկ կնոջ մը հանդիպիմ ... և ես ալ փոխադարձաբար, և լոկ պարտականութիւնս կատարելու միտքով, կը մաղթեմ ամենքնուդ որ աստանկ կիներու հանդիպիք և ձեր մեծ հայրերը ըլլաք ...:

ԱՆՄՆՈՒՈՒԼ

ԿԱՐԵԻՈՐ

Ի գիտութիւն մեր Կ. Պոլսոյ Պատ. Բաժանորդաց, կուգանք տեղեկացնել թէ մեր նախորդ ցրուիլին տեղ, թերթիս մասնաւոր գործակատար կարգած ենք Տիար Վարդանը:

Հետեւաբար նախորդ ցրուիլ Ստեփան աղան ո՛ր և է առնչութիւն չունի Հանրագիտակի հետ ներկայ թիւէն սկսեալ:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍԿԻՏԱՐ. — Կիրակի Մ. Խաչ եկեղեցին, ողբացեալ ուսուցչապետին՝ Ռէթէոս էֆ. Պէրպէրեանի հոգեհանգիստի պատարագին երգուած եռաձայնը այնքան լաւ տպաւորութիւն մը ըրաւ տեղացի երկսեռ ժողովուրդին վրայ, որ շատեր թաղ. Խորհուրդին դիմելով խումբ մ'ալ Սկիւտարի մէջ կազմակերպելու փափաք յայտնեցին:

ՈՍՄԱԹԻԱ. — Հինգշաբթիի վիճակին համար ուրիշ արուարձանէ մը հոս բերուած պտուղը չոգեկառքի վակոնին մէջ միւսիւրի մը գլխուն իյնալով վիճակը, քրքշալիւր կերպով կատարուեցին է ի տես երկսեռ բազմութեան մը:

ԿԷՏԻԿ-ՓԱՇԱ. — Անցեալ օր տեղւոյ վարժարանին աշակերտները Ֆիլօրեայ տարուեցան պտոյտի համար, բայց հակառակ հետերնին տարած կերակուրներու հետ հինգ հինգ զրուշալ հնչուն դրամ վճարած ըլլալուն, խեղճ պզտիկները երեկոյին անօթի տուն դառնալով չոր հացը ձեռքէ ձեռք փոխեցին: Խօսքին սուտը չիկայ սխալը կայ, տնտես եղբայրը օգտուելով, սխալներու և վարժուհիներու շարժումայով քատուիլ, բոլքա խաղալէն, սակառներու ճաշերը կէս մը կերեր կէս մ'ալ ծրարելով հետը տարեր է. Ծ. Խ.):

ՍԿԻՏԱՐ. Հոս տեղի տղաքն ալ չորեքշաբթի Պէյքով գացին, բայց բարեբաղդաբար հետերնին լաթէռնայի պէս գռէհիկ բաներ չի տարին: (Չափրաստի «գուք մէջէն» քատուիլը գոց գիտցող մ'ալ չիկար մէջերնին... Ծ. Խ.):

ԲԵՐԱ. — Ստոյգ աղբիւրէ կը տեղեկանանք թէ, մեր սրամիտ *solnephok* Ե. Թօլայեան ամիսէ մը ի վեր կը քրնանայ կոր եղեր, քսանը չորս ժամը անգամ մը տասը չիլ պիւռա խմելով: (Արթնասունէ անգամ մը խմբագրատուն հրամմէ. Ծ. Խ.):

ՍԿԻՏԱՐ. — Կը լսենք թէ կիրակիի եռաձայն պատարագին ներկայ չի գտնուող ծանօթ դպրապետ Երմոգէֆէնտի նոյն օրը Ալէմ-Տաղիի Ս. Նշան եկեղեցին կիւմպիւր կիւմպիւր էօթտիւրմիւլ է ըրեր իր սիրած աւանդական միաձայնովը... միաձայն:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Ատաբաղարի մեր Պատ. Բաժանորդներէն կը խնդրենք որ առանց չերաժմերու երրորդ քունին սպասելու՝ հաճին մեր դրամը շրկել, որպէս զի չստիպուինք ականէ յանուանէ հրապարակելու:

ԱԶԳ. ՀԻԱՆԴԱՆՈՑ. Կ'ըսուի թէ Հինգշաբթիի սեղանին համար կարգ մը ինքնակոչ հիւրեր օր առաջ քացախ խմեր են ախորժակ սրելու համար: (Կըլլա՞յ եա՞... Ծ. Խ.):

ՂԱՆԱԹԻԱ. — Հինգշաբթի օր հոս տեղի եկեղեցին ուխտի եկող չիք տիկին մը, քառսուննոցի տեղ տուած քառորդ ոսկին ընդունող ժամկոչը, երբ կը տեսնէ վրան նայելով ծածկել կ'ուզէր եղածը, տիկինը քմծիծաղով մը «գալ շաբթու աղջիկտես ունիմ», ժամկոչ աղբար... քեզ տեսնամ... կըսէ:

Ursofiuskr ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասցէի քիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՊԵՐՁԵՆԱՅ


Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուլթան Համալ, Թօփաշեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց թելոթիւններու
եւ տղայոց չիք եւ դիմացկուն փոքրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ. է:

Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50—38



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍՏԱՆԲՈՒԼԵԱՆԻ

Ճեշալ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյանէ,
Ջիւսասանէ, Հեղիասանէ, Ճալալէ եւ Ճա-
րոնէ:

Ամենէն գոհարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ իրաւունքները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ԿԸ ԾԱՆՈՒՑԱՆԵՆՔ ԹԷ

Մեր հրատարակութիւններէն

ՓՆՋԱԿ

Գ. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ

Եւ

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒՆՁ

Անուն օգտաշատ դասագիրքերը

ՆՈՐԷՆ ՏՊՈՒԵՑԱՆ

եւ կը վաճառուին սովորական գիներով
եւ թէ՛

Համառօտ Իրազիսութիւնն ալ

նորէն պիտի լոյս տեսնէ՝

Ուսումնական Խորհուրդէն վաւերացուած

Դիմել 47, Պապը-Ալի հասեալի

ՍՄԲԱՏ ԴԱՌԹԵԱՆ

Ա Պ Ա Ռ Ի Կ

6 ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱՒԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիդի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, և այլն. նաեւ անուններու սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու զլիսարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպտ վերարկուններ, բուրդէ և մետաքսէ շրջազգեստի կերպասներ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնս. Նովման) եայլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ քաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ ելն:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ շահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանքաց տոկոսնութիւնը, ներուժիւնը և աժառնութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

50 — 27



ՐԵԻԵԼՔ ՕՐԱՆ

ԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական:
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դրուշ, գաւառներու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.:
Զեռքէ վաճառում՝ քաղաքի փառա: Հասցէ՝
Ղալաթիա, Գամանտօ փողոց: ԱՐԵԻԵԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խմբագրական ընկերութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերականգնուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ-

րով, առաջնակարգ տեղ մը կը զբաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւուր աւելի հրապուրիչ դառնալով՝ նորանոր բարեօրոճներու շնորհիւ զորս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶՄԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսաբաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բաց ի դրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթնոթիւրէ, որոնք նիւթերու ճոխ պէսպիսութիւն մը կը կազմեն: